# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի I մասի 5-րդ կետով վերապահված գործառույթները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. 1169-Ն հրամանի պահանջը՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացնում է 2013թ. ինը ամիսների գնումների վերլուծությունը:

Հաշվետվության մեջ ներառված է պետական կառավարման մարմինների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա կազմակերպությունների, ինչպես նաև հանրային կազմակերպությունների կողմից այս տարվա առաջին ինը ամսիների ընթացքում կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվությունը: Ներկայացվող վերլուծությունը հիմնված է պատվիրատուների տրամադրած տվյալների վրա, որոնց լիարժեքության և ամբողջականության հետ կապված դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ: Տեղեկատվությունը շատ դեպքերում ստացվում է թերություններով, ինչը լրացուցիչ ճշգրտումների անհրաժեշտություն է առաջացնում: Թերեւս դա է պատճառը, որ տվյալները երբեմն-երբեմն փոխվում են:

Մյուս կողմից՝ պատվիրատուների զգալի մասը սահմանված ժամկետում այդպես էլ չի ներկայացնում պահանջվող տեղեկատվությունը: Խնդիրը շարունակում է առկա մնալ ինչպես պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, այնպես էլ քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների և հանրային կազմակերպությունների դեպքում: Բազմաթիվ քաղաքային համայնքներ ոչ միայն ժամանակին, այլև ընդհանրապես տեղեկատվություն չեն ներկայացնում:

Գործող 79 պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից երրորդ եռամսյակում կատարված գնումների վերաբերյալ սահմանված ժամկետում տվյալներ է ստացվել ընդամենը 52-ից: Մնացածը ներկայացրել է ուշացումով, ընդ որում, երբեմն 2-3 շաբաթվա տարբերությամբ: Մի բան, ինչը բարդություններ է ստեղծում տվյալների մշակման, ինչպես նաև սահմանված ժամկետում հաշվետվության ամբողջացման համար:

Պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից

հաշվետվության մեջ ներառված են 78-ի տվյալները: Մեկը՝ ի դեմս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության, հայտնել է, որ իր կողմից կատարված գնումները գաղտնիք են և հրապարակման ենթական չեն:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված գնումների վերաբերյալ 49 քաղաքային համայնքներից տեղեկատվություն է ստացվել ընդամենը 21-ից: Դրանց թիվը առաջին կիսամյակի համեմատ երկուսով ավելացել է: Դրանով հանդերձ քաղաքային համայնքների մեծ մասը տվյալներ ընդհանրապես չի ներկայացրել: Ուստի հաշվետվությունը հիմնված է կատարված գնումների վերաբերյալ տվյալներ տրամադրած 21 քաղաքային համայնքներից ստացված տեղեկատվության վրա:

Տեղեկատվության տրամադրման առումով շարունակում են պասիվ մնալ նաև հանրային կազմակերպությունները: Իհարկե, դրանց թիվը երրորդ եռամսյակում մեկով ավելացել է, բայց ընդհանուր առմամբ կատարված գնումների վերաբերյալ հանրային կազմակերպություններից տեղեկատվություն է ստացվել այդպիսի ընդամենը երկու ընկերությունից, ինչը թույլ չի տալիս լիարժեք պատկերացում կազմել այս ոլորտի գնումների ծավալների և արդյունավետության մասին:

Հաշվետու ժամանակահատվածում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում շարունակել է իրականացնել գնումների համակարգողների ուսուցման և շարունակական վերապատրաստման, մասնագիտական խորհրդատվության, մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքի գնահատման և որակավորման, շրջանակային համաձայնագրերի կնքման, շրջանակային համաձայնագրեր կնքած, գնումների նախաորակավորված մասնակիցների ցուցակների հրապարակման, էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման, մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից՝ պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային կարգով գնահատման, գնումների վերաբերյալ տվյալների վերլուծման և եզրակացությունների ներկայացման, ինչպես նաև մի շարք այլ գործառույթներ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը շարունակել է իրականացրել նաև գնումների բողոքարկման խորհրդի քարտուղարությունը: Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 42 բողոք, որոնցից բավարարվել է 17-ը: Ներկայացված բողոքներից 17-ը մերժվել է, առանց քննության է թողնվել 8 բողոք:

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**2013թ. 9 ամսվա ընթացքում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների և քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների, հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների վերաբերյալ, ըստ գնման նախահաշվային և կնքված արժեքների**

**<u>Վերլուծության օբյեկտը</u>** - 78 պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ, 21 քաղաքային համայնքներ*, դրանց ենթակայության 749 պատվիրատուներ (այդ թվում՝ 270 պետական կառավարման մարմինինների եւ պետական հիմնարկների, 479՝ քաղաքային համայնքների ենթակայության) և 2 հանրային կազմակերպություն

**<u>Վերլուծության ժամանակահատվածը</u>** - 01.01.2013-30.09.2013թթ.

**<u>Վերլուծության առարկան</u>** - Իրականացված գնումները, ըստ գնման նախահաշվային և կնքված արժեքի

**<u>Վերլուծության նպատակը</u>** - Հաշվետու ժամանակահատվածում կատարված գնումների արդյունավետության ուսումնասիրություն

**Նախահաշվային գին**** - Հաշվետու ժամանակաշրջանում տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուների կողմից կատարված գնումների նախահաշվային արժեքը կազմել է ընդհանուր առմամբ 278 249.7*** մլն դրամ, որոնցից 70 751.7 մլն դրամ՝ աշխատանքների, 125 959.0 մլն դրամ՝ ծառայությունների և 81 538.9 մլն դրամ՝ ապրանքների գծով:

Դրա զգալի մասը վերաբերում է ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման կարգի> 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցանկում ընդգրկված այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերմանը:

* Տեղեկատվության բացակայության պատճառով ներառված չեն 28 քաղաքային համայնքների կողմից կատարած գնումների տվյալները:

** Վերլուծության մեջ ներառված տվյալները հիմնված են պատվիրատուների ներկայացրած տեղեկատվության վրա:

***   Քաղաքային համայնքներից ստացված տեղեկատվությունը ճշգրտվել է, որի հետևանքով կատարված գնումների ցուցանիշներն առաջին կիսամյակի համեմատ նվազել են:

Այդպիսի գնումների գումարը կազմել է ավելի քան 114 մլրդ դրամ, որը համարժեք է իրականացված ամբողջ գնումների նախահաշվային արժեքի շուրջ 41 տոկոսին: Այս գումարի հիմնական մասը՝ 108,9 մլրդ դրամը, ուղղվել է ծառայությունների ձեռքբերմանը:

Գնման մյուս բոլոր ձևերով այս տարվա առաջին երեք եռամսյակների ընթացքում պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները, քաղաքային համայնքները, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուները հայտարարել են 164 189.6 մլրդ ՀՀ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որից 69 738.3 մլրդ դրամը՝ աշխատանքների, 77 462.8 մլրդ դրամը՝ ապրանքների և 16 988.3 մլրդ դրամը՝ ծառայությունների գծով:

**<u>Գծապատկեր 1</u>**

**2013թ. ինը ամիսներին կատարված գնումները ըստ նախահաշվային արժեքների**




2013թ. երեք եռամսյակների ընթացքում կատարած գնումների վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ տեղեկատվություն է ներկայացրել երկու հանրային կազմակերպություն՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ն և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն: Այս երկու ընկերությունները հայտարարել են ընդհանուր առմամբ 16,1 մլրդ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր: Կնքվել է ավելի քան 14 մլրդ դրամի պայմանագիր: Ձեռք են բերվել ավելի քան 8 մլրդ դրամի ապրանքներ, 4,4 մլրդ դրամի աշխատանքներ և 1,5 մլրդ դրամի ծառայություններ: Երկու

ընկերություններից խնայողություն է ապահովել միայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ФԲԸ-ն: Այն կազմել է շուրջ 710 մլն դրամ, ինչը համարժեք է նախահաշվային արժեքի 5,2 տոկոսին:

Տարեսկզբի երեք եռամսյակներին պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները հայտարարել են ավելի քան 107,5 մլրդ դրամ, քաղաքային համայնքները՝ 32,9 մլրդ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է ավելի քան 6,2 մլրդ դրամ, համայնքներինը՝ 17,5 մլրդ դրամ:

**<u>Գծապատկեր 2</u>**

**2013թ. ինը ամիսներին կատարված գնումները ըստ պատվիրատուների**




Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերից շուրջ 18,3 մլրդ դրամը եղել են բաց ընթացակարգերը: 17 մլրդ դրամ են կազմել բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով, 1,3 մլրդ դրամ՝ պարզեցված, ավելի քան 4,9 մլրդ դրամ՝ բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով կազմակերպված ընթացակարգերը: Շրջանակային համաձայնագրերով իրականացված գնումների նախահաշվային արժեքը հասնում է 65,8 մլրդ դրամի: Պետական կառավարման

մարմինները հաշվետու ժամանակահատվածում ավելի շատ կատարել են ապրանքների ձեռքբերման գնումներ:

Հայտարարված 107,5 մլրդ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգերից 53,5 միլիարդը վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը, 45,9 մլրդ դրամ են կազմել աշխատանքները: Ամենափոքր բաղադրիչը եղել է ծառայությունները՝ 8 մլրդ դրամ:

<u>**Աղյուսակ 1**</u>

**Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած գնումները ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | 16 972.8 | 625.8 | 672.6 | 18 271.3 |
| Պարզեցված ընթացակարգեր | 680.9 | 322.2 | 308.8 | 1 311.9 |
| Շրջանակային համաձայնագրեր | 7 888.6 | 52350.1 | 5 566.5 | 65 805.3 |
| Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով | 15 590.0 | 191.5 | 1 310.6 | 17 092.5 |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | 4835.1 | - | 139.1 | 4974.3 |
| Մրցակցային երկխոսություններ | - | - | 60828.0 | 60828.0 |

Ներկայացված տեղեկատվության համաձայն, սահմանափակ ընթացակարգեր գնման ձևով պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները տարեսկզբի ինը ամիսների ընթացքում գնումներ չեն իրականացրել:

Քաղաքային համայնքների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը հաշվետու ժամանակահատվածում կազմել է ավելի քան 32,9 մլրդ դրամ, որից 22,3 մլրդ դրամը աշխատանքների, 7,4 մլրդ դրամը՝ ծառայությունների և շուրջ 3,2 մլրդ դրամը՝ ապրանքների գծով: Ըստ ընթացակարգերի դրանք բաշխվել են հետևյալ ձևով. 24,9 մլրդ դրամ՝ բաց ընթացակարգերով, 1,8 մլրդ դրամ՝ պարզեցված ընթացակարգերով, 603 մլն դրամ՝ բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով, ավելի քան 1,8 մլրդ դրամ՝ բանակցային ընթացակարգեր հայտարարելով և շուրջ 3,7 մլրդ դրամ՝ շրջանակային համաձայնագրերով:

**Աղյուսակ 2**

**Քաղաքային համայնքների հայտարարած գնումները ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | 18 136.9 | 488.1 | 6 317.4 | 24 942.5 |
| Պարզեցված ընթացակարգեր | 869.5 | 349.8 | 602.7 | 1 822.1 |
| Շրջանակային համաձայնագրեր | 1 604.4 | 1 854.3 | 225.4 | 3 674.1 |
| Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով | 169.6 | 190.7 | 242.4 | 602.7 |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | 1 532.2 | 285.9 | 42.8 | 1 860.9 |

Սահմանափակ ընթացակարգեր և մրցակցային երկխոսություններ գնման ձևերով քաղաքային համայնքներն այս տարի գնումներ չեն կատարել:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը հաշվետու ժամանակահատվածում կազմել է ավելի քան 6,2 մլրդ դրամ, որից 1,2 մլրդ դրամը՝ աշխատանքների, 3,9 մլրդ դրամը՝ ապրանքների և 1 մլրդ դրամը՝ ծառայությունների գծով:

**Աղյուսակ 3**

**Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների հայտարարած գնումները ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | 25.0 | - | 306.7 | 331.7 |
| Պարզեցված ընթացակարգեր | 148.7 | 98.4 | 138.9 | 386.2 |
| Շրջանակային համաձայնագրեր | 55.3 | 3562.2 | 225.9 | 3843.4 |
| Բանակցային ընթացակարգեր առանց | 950.3 | 245.8 | 409.6 | 1650.8 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հայտարարելով | | | | |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | 57.5 | - | 1.9 | 59.4 |

Համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը տարեսկզբի երեք եռամսյակներին կազմել է 17,5 մլրդ դրամ: Ամենամեծ բաղադրիչը եղել է ապրանքների գծով՝ 16,9 մլրդ դրամ:

**Կայացած ընթացակարգերը ըստ թվաքանակի** - Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գծով պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարվել է ընդհանուր առմամբ 12 755 ընթացակարգ, որից 1 471-ը աշխատանքների կատարման, 6 876-ը՝ ապրանքների ձեռքբերման և 4 408-ը՝ ծառայությունների մատուցման համար:

**<u>Աղյուսակ 4</u>**

**Ընթացակարգերի քանակական բնութագիրը**

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Կազմակերպված ընթացակարգերի թվաքանակը | 1471 | 6876 | 4408 | 12755 |
| Չկայացած ընթացակարգերի թվաքանակը | 80 | 304 | 150 | 537 |
| Կայացած ընթացակարգերի թվաքանակը | 1356 | 6490 | 4221 | 12067 |

Առաջին երեք եռամսյակների ընթացքում կազմակերպված մրցույթներից 397-ը իրականացվել է բաց ընթացակարգերով, 626-ը՝ պարզեցված ընթացակարգերով: Մեծ է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգերի և շրջանակային համաձայնագրերի քանակը: Դրանք կազմել են համապատասխանաբար՝ 5 970 և 5 704 ընթացակարգ:

**<u>Աղյուսակ 5</u>**

**Ամփոփված և կայացած ընթացակարգերի**

**թվաքանակը ըստ գնման ձևի**

| Ցուցանիշների | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| անվանումները | | | | |
| Բաց ընթացակարգեր | 163 | 44 | 107 | 314 |
| Շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգեր | 248 | 3860 | 1142 | 5250 |
| Պարզեցված ընթացակարգեր | 192 | 136 | 167 | 495 |
| Սահմանափակ ընթացակարգեր | --- | --- | --- | --- |
| Մրցակցային երկխոսություններ | --- | --- | 1 | 1 |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | 35 | 1 | 15 | 51 |
| Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու | 718 | 2449 | 2 789 | 5956 |

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները հաշվետու ժամանակահատվածում հայտարարել են ընդհանուր առմամբ 3 989 ընթացակարգ, որը կազմել է բոլոր ընթացակարգերի 31 տոկոսը: Հայտարարված ընթացակարգերից 721-ը վերաբերել է աշխատանքների կատարմանը, 1 356-ը՝ ապրանքների ձեռքբերմանը և 1 912-ը՝ ծառայությունների մատուցմանը: Տվյալների ստացման պահին ամփոփված և կայացած է եղել 3 768 ընթացակարգ: Չի կայացել 151-ը: Եվս 55-ը գտնվել է ընթացքում:

Կազմակերպված ընթացակարգերի կեսից ավելին՝ 1 946-ը, շրջանակային համաձայնագրերն են: Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով իրականացված ընթացակարգերի թիվը հասնում է 1 700-ի: Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները տարեսկզբի ինը ամիսներին հայտարարել են 155 բաց և 167 պարզեցված ընթացակարգեր: Եվս 20-ը եղել է բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով: Մրցակցային երկխոսության ձևով իրականացվել է ընդամենը 1 ընթացակարգ:

Քաղաքային համայնքները հաշվետու ժամանակահատվածում հայտարարել են ընդհանուր առմամբ 1 760 ընթացակարգ, որը կազմել է բոլոր ընթացակարգերի

շուրջ 13,8 տոկոսը: Հայտարարված ընթացակարգերից 448-ը վերաբերել է աշխատանքների կատարմանը, 738-ը՝ ապրանքների ձեռքբերմանը և 574-ը՝ ծառայությունների մատուցմանը: Տվյալների ստացման պահին ամփոփված և կայացած է եղել 1 558 ընթացակարգ: Չի կայացել 158 ընթացակարգ: Եվս 52-ը գտնվել է ընթացքում:

Հաշվետվության մեջ ներառված պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների և քաղաքային համայնքների ենթակայության մարմինները, տարեսկզբի ինը ամիսներին հայտարարել են ընդհանուր առմամբ 7010 ընթացակարգ, որը կազմել է բոլոր ընթացակարգերի շուրջ 55 տոկոսը: Հայտարարված ընթացակարգերից 302-ը վերաբերել է աշխատանքների կատարմանը, 4 782-ը՝ ապրանքների ձեռքբերմանը և 1 926-ը՝ ծառայությունների մատուցմանը: Տվյալների ստացման պահին ամփոփված և կայացած է եղել 6 746 ընթացակարգ: Չի կայացել 225 ընթացակարգ: Եվս 37-ը գտնվել է ընթացքում:

Հայտարարված ընթացակարգերի շուրջ կեսը՝ 3 566-ը, բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով իրականացված գնումներն են: 3 250-ը՝ շրջանակային համաձայնագրերն են: Պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների և քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուները տարեսկզբի երեք եռամսյակներին հայտարարել են 23 բաց և 167 պարզեցված ընթացակարգեր: Եվս 4-ը եղել է բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով:

**Չկայացած ընթացակարգերը ըստ թվաքանակի** - Հաշվետու ժամանակահատվածում հայտարարված ընթացակարգերից ամփոփվել է 12 601-ը: Չի կայացել 534-ը կամ 4,2 տոկոսը: Չկայացած ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է շուրջ 10,6 մլրդ դրամ: Դրա շուրջ կեսը՝ 5,1 մլրդ դրամը, բաժին է ընկել բաց ընթացակարգերին: Երկրորդը որպես այդպիսին, շրջանակային համաձայնագրերն են, որտեղ չի կայացել 4,2 մլրդ դրամի ընթացակարգ: Չկայացած գնումների մեջ մեծ է աշխատանքների կատարման և ապրանքների ձեռքբերման մասնաբաժինը. եթե առաջինը կազմել է 5,4 մլրդ դրամ, ապա երկրորդը՝ 4,2 մլրդ դրամ:

Չկայացած ընթացակարգերի մեծ մասը՝ 374-ը, եղել է շրջանակային համաձայնագրով գնումների կատարման դեպքում: Գնման այդ ձևով հայտարարված և ամփոփված 5 250 ընթացակարգերից չի կայացել 374-ը:

Հայտարարված 397 բաց ընթացակարգերից ամփոփվել և կայացել է 314-ը: Չի կայացել 48-ը կամ շուրջ 13,2 տոկոսը: Տվյալների ստացման ավարտին դեռևս չէր ամփոփվել 33 բաց ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգերով հայտարարված 626 մրցույթներից չկայացած է համարվել 102-ը կամ 17 տոկոսը: Տվյալների ստացման պահին դեռևս ընթացքում է եղել 34 նման ընթացակարգ:

Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով չկայացած է համարվել 10 ընթացակարգ:

<u>Աղյուսակ 6</u>

**Չկայացած ընթացակարգերի թվաքանակը ըստ գնման ձևերի**

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | 28 | 4 | 16 | 48 |
| Շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգեր | 18 | 281 | 75 | 374 |
| Պարզեցված ընթացակարգեր | 34 | 16 | 52 | 102 |
| Սահմանափակ ընթացակարգեր | --- | --- | --- | --- |
| Մրցակցային երկխոսություններ | --- | --- | --- | --- |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | --- | --- | --- | --- |
| Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու | --- | 3 | 7 | 10 |

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները տարեսկզբի երեք եռամսյակներին կազմակերպել են 3 989 ընթացակարգ: Ամփոփված 3 919 ընթացակարգից չի կայացել 151-ը. 30-ը՝ եղել է աշխատանքների, 69-ը՝ ապրանքների և 52-ը՝ ծառայությունների դեպքում: Չկայացածները կազմում են ամփոփված ընթացակարգերի 3,8 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից հայտարարված և չկայացած ընթացակարգերի գերակշիռ մասը բաժին է ընկել շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումներին՝ 151-ից 105-ը: Ամփոփված 122 բաց ընթացակարգերից չի կայացել 25-ը կամ ավելի քան 20 տոկոսը: 33 բաց ընթացակարգ գտնվել է ընթացքում:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերում չկայացածության ցուցանիշը բարձր է նաև

պարզեցված ընթացակարգերի դեպքում: Ամփոփված 144 նման ընթացակարգից 21-ը կամ ավելի քան 12 տոկոսը հայտարարվել է չկայացած:

Քաղաքային համայնքները տարեսկզբի ինը ամիսներին կազմակերպել են 1 760 ընթացակարգ: Ամփոփված 1 716 ընթացակարգից չի կայացել 158-ը: 32-ը եղել է աշխատանքների, 56-ը՝ ապրանքների և 70-ը՝ ծառայությունների դեպքում: Չկայացածները կազմում են ամփոփված ընթացակարգերի 9,2 տոկոսը: Քաղաքային համայնքների կողմից հայտարարված և չկայացած ընթացակարգերի գերակշիռ մասը բաժին է ընկել շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումներին՝ 158-ից 79-ը: Ամփոփված 218 բաց ընթացակարգերից չի կայացել 19-ը:

Քաղաքային համայնքների հայտարարած ընթացակարգերում չկայացածության ցուցանիշը բարձր է պարզեցված ընթացակարգերի դեպքում: Կազմակերպված 263 նման ընթացակարգից 59-ը կամ շուրջ 22,4 տոկոսը հայտարարվել է չկայացած:

Պետական կառավարման մարմինների եւ պետական հիմնարկների, ինչպես նաև քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուները հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել են 7010 ընթացակարգ: Ամփոփված 6 971 ընթացակարգից չի կայացել 225-ը: 18-ը՝ եղել է աշխատանքների, 179-ը՝ ապրանքների և 28-ը՝ ծառայությունների դեպքում: Չկայացածները կազմում են ամփոփված ընթացակարգերի 3,2 տոկոսը: Չկայացած ընթացակարգերի գերակշիռ մասը բաժին է ընկել շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումներին՝ 225-ից 190-ը: Ամփոփված 32 բաց ընթացակարգերից չի կայացել 4-ը կամ 12,5 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների եւ պետական հիմնարկների, ինչպես նաև քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուների հայտարարած ընթացակարգերում չկայացածության ցուցանիշը համեմատաբար բարձր է նաև պարզեցված ընթացակարգերի դեպքում: Կազմակերպված 169 նման ընթացակարգից 22-ը կամ 13 տոկոսը հայտարարվել է չկայացած: Չկայացածության մակարդակը բարձր է հատկապես պետական կառավարման մարմինների եւ պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների հայտարարած պարզեցված ընթացակարգերի դեպքում: 81 նման ընթացակարգից 20-ը չի կայացել, ինչը կազմում է իրականացված ընթացակարգերի գրեթե 25 տոկոսը:

**Գնման գին** - Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված 164,2 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների դիմաց կնքվել է 137,2 մլրդ դրամի

պայմանագիր, որից 60,0 մլրդ դրամը աշխատանքների, 62,0 մլրդ դրամը՝ ապրանքների և 15,1 մլրդ դրամը՝ ծառայությունների գծով: Դեռևս չամփոփված գնումների նախահաշվային արժեքը կազմել է 2,4 մլրդ դրամ:

**<u>Գծապատկեր 3</u>**

**2013թ. ինը ամիսներին կնքված պայմանագրերը ըստ ապրանք, աշխատանք, ծառայության**




Տարեսկզբի ինը ամիսներին պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած 107,5 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքվել է 86,8 մլրդ դրամի պայմանագիր՝ 40,9 մլրդ դրամ ապրանքների ձեռքբերման, 38,7 մլրդ դրամ աշխատանքների կատարման և 7,1 մլրդ դրամ ծառայությունների մատուցման համար:

Կնքված պայմանագրերի գերակշիռ մասը կամ 61 տոկոսը վերաբերել է շրջանակային համաձայնագրերին: 86,8 մլրդ դրամ պայմանագրային արժեքով գնումներից 52,9 միլիարդը կատարվել է գնման այս ձևով: Շրջանակային համաձայնագրերով կնքվել է 40,3 մլրդ դրամ ապրանքի, շուրջ 5,2 մլրդ դրամ՝ ծառայության և 7,5 մլրդ դրամ՝ աշխատանքի ձեռքբերման պայմանագիր:

Պարզեցված ընթացակարգով հայտարարված 1,3 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից կնքվել է ավելի քան 1 մլրդ դրամի պայմանագիր: Ամենամեծ բաղադրիչը՝ 566,6 մլն դրամ, բաժին է ընկել աշխատանքների կատարմանը:

Բանակցային ընթացակարգ առանց հայտարարելու գնման ձևով պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները կնքել են շուրջ 16,6 մլրդ դրամի պայմանագիր, որից 15,2 մլրդ դրամը աշխատանքների ձեռքբերման համար:

Բաց ընթացակարգով հայտարարված շուրջ 18,3 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքվել են 10,7 մլրդ դրամ աշխատանքների կատարման, 152,2 մլն դրամ ապրանքների մատակարարման և 370,5 մլն դրամ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Տվյալների հավաքագրման ավարտին դեռեւս ամփոփված չէր 1,2 մլրդ դրամ գումարով հայտարարված բաց ընթացակարգ: Հաշվետու ժամանակահատվածում 4,6 մլրդ դրամի բաց ընթացակարգ հայտարարվել է չկայացած: Այն կազմում է այս ընթացակարգով ամփոփված գնումների ավելի քան 27 տոկոսը:

<u>Աղյուսակ 7</u>

**Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | 10695.0 | 152.3 | 370.6 | 11217.8 |
| Պարզեցված ընթացակարգեր | 566.6 | 253.2 | 239.7 | 1059.5 |
| Շրջանակային համաձայնագրեր | 7484.3 | 40320.5 | 5167.7 | 52972.6 |
| Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով | 15263.1 | 189.6 | 1191.0 | 16643.7 |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | 4748.1 | - | 134.9 | 4883.1 |
| Մրցակցային երկխոսություն | - | - | 49.3 | 49.3 |

Քաղաքային համայնքների գնումների 32,9 մլրդ դրամ նախահաշվային արժեքի շրջանակներում կնքված պայմանագրերի գինը կազմել է 29,4 մլրդ դրամ, որից շուրջ 20 միլիարդը բաժին է ընկել աշխատանքների ձեռքբերմանը: 6,8 մլրդ դրամ են կազմել ծառայությունների, ավելի քան 2,5 մլրդ դրամ՝ ապրանքների ձեռքբերման պայմանագրերը:

Քաղաքային համայնքների կողմից կնքված պայմանագրերի գերակշիռ մասը՝ 23,7 մլրդ դրամը, բաց ընթացակարգերի շրջանակներում է: Քաղաքային համայնքները շրջանակային համաձայնագրերով կնքել են 2,9 մլրդ դրամի ապրանքների ձեռքբերման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր: Մեկ մլրդ դրամ են կազմել պարզեցված ընթացակարգերով կատարված գնումների շրջանակներում կնքված պայմանագրերը: Քաղաքային համայնքները բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով կնքել են գրեթե 5,3 մլրդ դրամի պայմանագրեր:

<u>**Աղյուսակ 8**</u>

**Քաղաքային համայնքների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | 17 053.3 | 448.7 | 6 262.8 | 23 764.8 |
| Պարզեցված ընթացակարգեր | 569.5 | 278.4 | 245.2 | 1093.2 |
| Շրջանակային համաձայնագրեր | 1 442.0 | 1328.8 | 151.9 | 2 922.8 |
| Բանակցային ընթացակարգ առանց հայտարարելով | 164.8 | 176.6 | 193.4 | 534.8 |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | 752.9 | 284.5 | 17.3 | 1 054.7 |

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուները 6,2 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքել են 5,2 մլրդ դրամի պայմանագրեր: Դրանց գերակշիռ մասը՝ շուրջ 3,3 մլրդ դրամը, վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը: Այն իրականացվել է հիմնականում շրջանակային համաձայնագրերով: Կնքված պայմանագրերի կեսից ավելին՝ 3,2 մլրդ դրամը, վերաբերել է շրջանակային համաձայնագրերով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերմանը:

Աղյուսակ 9

**Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | - | - | 120.7 | 120.7 |
| Պարզեցված ընթացակարգեր | 70.2 | 51.9 | 104.3 | 226.5 |
| Շրջանակային համաձայնագրեր | 40.1 | 3 071.8 | 151.8 | 3 263.8 |
| Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով | 947.8 | 204.3 | 378.6 | 1 530.8 |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | 53.0 | - | 1.4 | 54.4 |

Համայնքների ենթակայության տակ գործող պատվիրատուների հայտարարած 17,5 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքված պայմանագրերի գումարը կազմել է  շուրջ 15,8 մլրդ դրամ, որից 15,2 միլիարդը ապրանքների գծով:

**Գծապատկեր 4**

**2013թ. ինը ամիսներին կնքված պայմանագրերը ըստ պատվիրատուների**




**Չկայացած գնումներ** – Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների կողմից հայտարարված 164,6 մլրդ դրամ նախահաշվային արժելով ընթացակարգերից չի կայացել 10,6 միլիարդը: Դրանք մեծամասամբ՝ եղել են աշխատանքների՝ 5,4 մլրդ դրամ և ապրանքների՝ 4,3 մլրդ դրամ, ձեռքբերման համար հայտարարված ընթացակարգեր: Չկայացած գնումներից 962 մլն դրամը բաժին է ընկնում ծառայությունների մատուցմանը:

Չկայացածության ցուցանիշը բարձր է բաց ընթացակարգերի դեպքում: Ամփոփված 42,6 մլրդ դրամ բաց ընթացակարգերից չի 12 տոկոսը: Շրջանակային համաձայնագրերով կատարված գնումների դեպքում չկայացած է հայտարարվել ամփոփված գնումների 5,8 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած 107,5 մլրդ դրամ գնումներից չի կայացել 9 մլրդ դրամը, որից 4,8 մլրդ դրամը աշխատանքների, ավելի քան 3,7 մլրդ դրամը՝ ապրանքների և 413,6 մլն դրամը՝ ծառայությունների գծով: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքի շուրջ 8,5 տոկոսը չի կայացել:

Չկայացածության ցուցանիշը համեմատաբար ցածր է քաղաքային համայնքների կողմից կատարված գնումների դեպքում: 32,7 միլիարդից չի կայացել ընդամենը 1 մլրդ 51 մլն դրամի ընթացակարգ, որը կազմում է ընդհանուրի 3,2 տոկոսը:

**Աղյուսակ 10**

**Չկայացած գնումները ըստ ընթացակարգերի**

մլն ՀՀ դրամ

| Ցուցանիշների անվանումները | Աշխատանք | Ապրանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Բաց ընթացակարգեր | 4 734.5 | 76.2 | 330.7 | 5 141.5 |
| Պարզեցված ընթացակարգեր | 242.5 | 129.2 | 344.2 | 715.8 |
| Շրջանակային համաձայնագրեր | 443.2 | 4 054.6 | 228.2 | 4 726.0 |
| Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով | - | 0.6 | 58.9 | 59.6 |
| Բանակցային ընթացակարգեր հայտարարելով | - | - | - | - |

**Մասնակցություն**- 2013թ. առաջին կիսամյակում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակա պատվիրատուների կողմից հայտարարված 12 755 ընթացակարգերի մասնակիցների թիվը կազմել է 21 194: Միջին մասնակցությունը 1,76 է: Մասնակցությունը համեմատաբար բարձր է ապրանքների ձեռքբերման և աշխատանքների կատարման համար հայտարարված ընթացակարգերի դեպքում: Մեկ մրցույթին միջինը 1,96 մասնակից:

Հայտարարված ընթացակարգերից բարձր մասնակցություն է ապահովվել բաց ընթացակարգերի դեպքում: Միջին մասնակցությունն այստեղ հասնում է 3-ի: Ակտիվությունն ավելի մեծ է աշխատանքների կատարման մրցույթներում՝ միջինը մեկ ընթացակարգին եղել է գրեթե 4,2 մասնակից: Շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումների ժամանակ մասնակցությունը հասնում է միջինը 2,5-ի: Ընդհանուր առմամբ շրջանակային համաձայնագրերով կատարված գնումների մասնակիցների թիվը գերազանցում է 13 հազարը:

Պարզեցված ընթացակարգերի միջին մասնակցությունը տարեսկզբի ինը ամիսներին եղել է շուրջ 1,55:

<u>**Գծապատկեր 5**</u>

**Մասնակցության ցուցանիշները ըստ գնման ձևերի**




Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից տարեսկզբի ինը ամիսներին հայտարարված 3 989 ընթացակարգերին մասնակցել է 8 074 մատակարար, որից 1 405-ը՝ աշխատանքների, 3 654-ը՝ ապրանքների և 3 015-ը՝ ծառայությունների գծով: Միջին մասնակցությունը հասնում է 2,02-ի: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած բաց ընթացակարգերին միջին մասնակցությունը գերազանցում է 4,8-ը: Շրջանակային համաձայնագրերի դեպքում այն հասնում է 2,97-ի: Ցածր է պարզեցված ընթացակարգերի մասնակցությունը՝ միջինը 1,54:

Մասնակցության առումով ակտիվությունն առավել բարձր է ապրանքների ձեռքբերման ժամանակ: Այստեղ միջին մասնակցությունը հասնում է 2,7-ի: Մինչդեռ,

ծառայությունների դեպքում յուրաքանչյուր ընթացակարգի հաշվով միջին մասնակցությունը 1,58 է:

Շրջանակային համաձայնագրերով պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից իրականացված 1805 ընթացակարգերին եղել է 5358 մասնակից: Միջինը մեկ ընթացակարգին ներկայացվել է 2,97 հայտ: Շրջանակային համաձայնագրերով պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից ամենաբարձր մասնակցությունն ապահովվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայություն գործակալությունը: Ամփոփված և կայացած մեկ մրցույթին միջին մասնակցությունը հասնում է 11,5-ի: Իրականացված 17 նման ընթացակարգերին եղել է 195 մասնակից:

Պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից շրջանակային համաձայնագրերով կատարված գնումներին մասնակցության ամենացածր ցուցանիշն արձանագրվել է ՀՀ ՏԿՆ դեպքում: Իրականացված 76 ընթացակարգերին մասնակցել է 85 հայտատու: Մեկ մրցույթի միջին մասնակցությունը եղել է 1,1 մասնակից **(Տեղեկանք 1)**:

Հաշվետու ժամանակահատվածում բաց ընթացակարգ է իրականացրել 24 պետական կառավարման մարմին և պետական հիմնարկ: Դրանք հայտարարել են 155 բաց ընթացակարգ: Ամփոփվել և կայացել է 97-ը, որոնց մասնակցել է ընդհանուր առմամբ 468 մատակարար: Ամենաբարձր մասնակցությունն ապահովվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարված ընթացակարգերի ժամանակ: Միջինը մեկ մրցույթին եղել է 13,5 մասնակից: ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ իրականացրած 13 բաց ընթացակարգերին մասնակցել է 102 մատակարար՝ միջին մասնակցությունը գերազանցում է 7,8-ը: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած բաց ընթացակարգերի միջին մասնակցությունը եղել է 4,8 **(Տեղեկանք 2):**

Միջին մասնակցության ցուցանիշը պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած պարզեցված ընթացակարգերի դեպքում 1,54 է: Հաշվետու ժամանակահատվածում պարզեցված ընթացակարգերով մասնակցությունը բարձր է եղել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մոտ: Որպես այդպիսին ամփոփված և կայացած 1 նման ընթացակարգին մասնակցել է 18 մատակարար: Բազմաթիվ պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների իրականացած պարզեցված ընթացակարգերին եղել է ընդամենը 1 մասնակից **(Տեղեկանք 3):**

Միջին մասնակցության ցուցանիշը ցածր է բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևի դեպքում: Միջինը եղել է 1,16 հայտ: Պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից տարեսկզբի ինը ամիսներին այս ձևով գնում է կատարել 55-ը: Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման եղանակով կազմակերպված գնումներին հիմնականում եղել է մեկ մասնակից: Թեև առանձին դեպքերում հայտերի թիվը մեկից ավելին է: Մասնավորապես Շիրակի մարզպետարանի իրականացրած նման 53 ընթացակարգին մասնակցել է 151 մատակարար. միջինը՝ մեկ ընթացակարգին գրեթե 3 մասնակից: ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կազմակերպած 39 այդպիսի գնման ընթացակարգերին ներկայացվել է 108 հայտ: Միջին մասնակցությունը 2,77 է **(Տեղեկանք 4) :**

Հաշվետու ժամանակահատվածում բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով գնումներ են կատարել 7 պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ: Իրականացվել է այդպիսի 20 ընթացակարգ, որոնց մասնակցել է 39 մատակարար: Միջին մասնակցությունը հասնում է 2-ի: Մասնակցությունը միջինից բարձր է եղել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրականացրած ընթացակարգերի դեպքում: Երկու նման ընթացակարգերին մասնակցել է 7 հայտատու. միջինը՝ 3,5 մասնակից: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կազմակերպած 2 այդպիսի ընթացակարգերին ներկայացվել է նույնքան հայտ **(Տեղեկանք 5):**

Ներկայացված տեղեկատվության համաձայն, տարեսկզբի ինը ամիսներին պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից միայն մեկն է գնում կատարել մրցակցային երկխոսության ընթացակարգով: Կազմակերպվել է այդպիսի մեկ մրցույթ, որին մասնակցել է 4 մատակարար: Պատվիրատուն եղել է ՀՀ ԱՆ «Առողջապահական ԾԻԳ» ՊՀ-ն **(Տեղեկանք 6):**

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուների մոտ միջին մասնակցությունը 1,6 է:

Քաղաքային համայնքների իրականացրած ընթացակարգերին եղել է միջին հաշվով 1,5 հայտ:

Մասնակցության ցուցանիշը ցածր է նաև քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների մոտ՝ 1,46 մասնակից մեկ ընթացակարգին:

**Մերժված մասնակիցներ** - Հաշվետու ժամանակահատվածում 1 419 մատակարարի մասնակցությունը հայտարարված ընթացակարգերին մերժվել է:

Մերժվածների հիմնական մասը եղել են ապրանքների մատակարարները՝ 864-ը: Աշխատանքների դեպքում մերժվել է 309, ծառայությունների դեպքում՝ 246 մասնակից: Ըստ ընթացակարգերի մերժումները բաշխվել են հետևյալ կերպ. շրջանակային համաձայնագրեր՝ 1085 մասնակից, բաց ընթացակարգեր՝ 171 մասնակից, պարզեցված ընթացակարգեր՝ 129 մասնակից, բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով՝ 25 մասնակից և բանակցային ընթացակարգեր հայտարարելով՝ 7 մասնակից:

Հաշվետու ժամանակահատվածում գնումների գործընթացներից մերժված 1 419 հայտատուներից 625-ը եղել են պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի մասնակից: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից կազմակերպված ընթացակարգերից մերժված մասնակիցները կազմել են ընդհանուրի շուրջ 44 տոկոսը:

Ինչպես նախորդ երկու եռամսյակներում, այնպես էլ երրորդում մերժումների ցուցանիշը բարձր է եղել բաց ընթացակարգերի դեպքում. Մերժվածները կազմել են մասնակիցների ավելի քան 35 տոկոսը: Ընդհանուր առմամբ ամփոփված և կայացած 97 նման ընթացակարգերին մասնակցել է 468 մատակարար: Դրանցից 165-ը մերժվել է: Մերժվածներից 49-ը եղել է ՀՀ պաշտպանության նախարարության, 39-ը՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի իրականացրած պարզեցված ընթացակարգի հայտատու: Մերժումների տոկոսը բարձր է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կազմակերպած բաց ընթացակարգերի դեպքում: Ամփոփված և կայացած 2 նման ընթացակարգին ներկայացվել է 27 հայտ, որից 25-ը կամ շուրջ 93 տոկոսը մերժվել է **(Տեղեկանք 7):**

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ամփոփած և կայացած հայտարարված 144 պարզեցված ընթացակարգերին հայտ է ներկայացրել 222 մասնակից: Մերժում է ստացել 44-ը կամ շուրջ 20 տոկոսը: Մերժվածներից 12 եղել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, 8-ը՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ կազմակերպած ընթացակարգերի հայտատու: ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ՃՈ-ն ամփոփել է 21 ընթացակարգ. հայտ ներկայացրած 26 մասնակիցներից 5-ը մերժվել է **(Տեղեկանք 8):**

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ ներկայացված տեղեկատվության, պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկներն իրականացրել են 1805 շրջանակային համաձայնագրեր, որոնց մասնակցել է 5358 հայտատու: Մերժում է ստացել 403-ը, ինչը տոկոսային հարաբերությամբ կազմում է ընդհանուր մասնակիցների 7,5 տոկոսը: Մերժումների ցուցանիշը բարձր է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության՝ 56 տոկոս, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի՝ 31 տոկոս,

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության՝ 27,2 տոկոս, հայտարարած շրջանակային համաձայնագրերի դեպքում: Փոխարենը՝ բազմաթիվ պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ այս ընթացակարգով գնումներ կատարելու ժամանակ մերժված մասնակիցներ ընդհանրապես չեն ունեցել: **(Տեղեկանք 9):**

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից տարեսկզբի ինը ամիսներին իրականացված բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևից մերժում է ստացել ընդամենը 1 մասնակից, որը եղել է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության հայտարարած ընթացակարգերի հայտատու **(Տեղեկանք 10):**

Բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով ամփոփված և կայացած 20 ընթացակարգերին մասնակցել է 39 մատակարար, մերժվել է 8-ը: Դրանցից 5-ը եղել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի իրականացրած ընթացակարգերի մասնակից: Մեկական մասնակից մերժել են ՀՀ ՊՆ-ն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտային ԾԻԳ» ՊՀ-ն և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը **(Տեղեկանք 11):**

ՀՀ ԱՆ «Առողջապահական ԾԻԳ» ՊՀ կողմից իրականացված մեկ մրցակցային երկխոսությանը ներկայացվել է 4 հայտ, որից 2-ը մերժվել է **(Տեղեկանք 12):**

